

**Աշոտ Ոսկանյան**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոքիզնետի կառավարման և քաղաքականության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հեղափոխական կենտրոնի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ*  
Էլ. հասցե՝ [ashot.voskan@gmail.com](mailto:ashot.voskan@gmail.com)

**Աննա Քարտաշյան**

*Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոքիզնետի կառավարման և քաղաքականության ամբիոնի ասիստենտ, Էկոնոմիկայի նախարարության Գյուղատնտեսական ծրագրերի մշակման, ռեսուրսների օգտագործման և կոոպերացիայի զարգացման վարչության գլխավոր մասնագետ*  
Էլ. հասցե՝ [qartashyananna@gmail.com](mailto:qartashyananna@gmail.com)

DOI: 10.53614/18294952-2021.1-73

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Կորոնավիրուսի համավարակի պայմաններում, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում առավել է կարևորվում հացահատիկի արտադրության տևական և կայուն ապահովումը: Հողվածի նպատակն է վեր հանել հացահատիկի արտադրությունից մինչև վերջնական սպառում շղթայի խնդիրներն ու առաջարկել վերջիններիս լուծման ուղիներ:

Կիրառելով տնտեսագիտական ուսումնասիրության, ինչպես նաև հանդիպում-քննարկում-հարցումներ մեթոդները՝ կատարվել է հացահատիկի արտադրությունից մինչև իրացում ծագող փոխհարաբերությունների, ցորենի արժեզրթայի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն: Արդյունքում առաջարկվել են հանրապետությունում հացահատիկի արտադրության և իրացման հիմնախնդիրների կարգավորման համալիր միջոցառումներ:

**Հիմնաբառեր.** արժեզրթա, արտադրություն, վերանշակում, իրացում, սերմնաբուծություն, հողերի խոշորացում, ապրանքայնություն, պետական աջակցություն

## Ներածություն

Հայաստանի Հանրապետությունում պարենային անվտանգության ապահովման տեսանկյունից ռազմավարական նշանակություն ունի հացահատիկով, մասնավորապես՝ ցորենով պարենային ապահովվածության բարձր մակարդակը: Վերջին տարիներին ցորենի ինքնաբավության աստիճանը զգալիորեն կրճատվել է և 2019 թ. կազմել է ընդամենը 25,9 %՝ 2015 թ. 49,5 %-ի դիմաց: Տարեկան ներմուծվում է 250,0–330,0 հազար տոննա ցորեն, ընդ որում 2017–2019թթ. ցորենի ներմուծման ծավալները 1,8–2,2 անգամ ավելին են տեղական արտադրությունից (Պարենային ապահովություն և աղքատություն, 2020, էջ 74, 2019, էջ 66, 2018, էջ 67): Սակայն COVID-19-ի համավարակով, ինչպես նաև երկրում տիրող ռազմական դրությամբ պայմանավորված՝ կարող են առաջանալ մատակարարման ընդհատումներ: Միջազգային շուկայում գների կտրուկ տատանման և ներմուծված ցորենի ու այլուրի բարձր գների պատճառով երկրում հնարավոր է հացամթերքների գների բարձրացում, որը պարզապես անթույլատրելի կլինի ներկայիս սոցիալական և տնտեսական պայմաններում:

Հացահատիկի համաշխարհային արտադրությունը տարբեր գործոնների ազդեցությամբ ենթարկվում է լրջագույն տատանումների: Հաճախ ստեղծվում է այնպիսի իրավիճակ, որը չի ապահովում նույնիսկ սննդամթերքի ֆիզիկական մատչելիություն՝ անգամ ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Հայաստանի պատմական փորձը, աշխարհաքաղաքական զարգացումները վկայում են, որ կարող ենք հայտնվել տարաբնույթ շրջափակումների և սահմանափակումների մեջ: Ուստի կարևորում ենք երկրում հացահատիկային տնտեսության զարգացման գործուն քայլերի ձեռնարկումը, եղած հողային, ջրային, աշխատանքային, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, ցորենի փոխանցիկ պահուստային պաշարների ստեղծումը, իսկ հեռանկարում՝ մրցակցային պայմանների և մարտահրավերների ուսումնասիրությունն ու պարենային ցորենի կայուն բերքի ծավալների ավելացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Մեր խորին համոզմամբ հանրապետությունում անհրաժեշտ է խթանել հացահատիկի արտադրության ծավալների ավելացումը՝ ի հաշիվ չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերը շրջանառության մեջ ներգրավելու և բարձր վերարտադրության որակյալ սերմերի օգտագործման, ինչպես նաև արտադրությունից մինչև սպառում շղթայի կատարելագործմամբ:

## Մեթոդը

Հետազոտության իրականացման համար հիմք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալները, ՀՀ «Սերմերի գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում գրանցված շուրջ 16 սերմարտադրողների հետ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում կազմակերպված հանդիպում-քննարկման արդյունքները, ՀՀ բոլոր մարզպետարանների գյուղատնտեսության ոլորտի ներկայացուցիչների հետ հեռավար քննարկումները, ինչպես նաև գյուղատնտեսությունում տնտեսավարողների(հացահատիկ մշակող և վերամշակող) հետ հեռախոսազրույցների արդյունքները:

## Արդյունքներ և քննարկում


Հանրապետությունում պարենային կայուն համակարգերի ստեղծման հարցում գյուղատնտեսական արտադրանքների արժեշրթանների կարևորությանը իրենց աշխատություններում անդրադարձել են տարբեր տնտեսագետներ (Ոսկանյան Ա., Ավետիսյան Ս. և այլոք): Միջազգային մի շարք կազմակերպությունների հետ համատեղ գյուղատնտեսական արտադրանքների արժեշրթանների ուսումնասիրությանն ուղղված տարբեր տարիների աշխատություններում, ինչպես նաև Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրարային քաղաքականության և տնտեսագիտության հետազոտական կենտրոնի գիտական հաշվետվություններում ևս կարևորվում է արժեշրթանների բազմակողմանի վերլուծության անհրաժեշտությունը: Ուստի, հաշվի առնելով նաև այն, որ հանրապետությունում ռազմավարական առաջնային խնդիրներից է հացահատիկի ներքին շուկայի վրա հիմնված արտադրության խրախուսումը և օժանդակումը, հողվածում առավել հանգամանորեն վերլուծվել է հացահատիկի արժեշրթան:

## ՀՀ-ում հացահատիկային մշակաբույսերի հիմնական արտադրատնտեսական ցուցանիշների վերլուծություն

Չնայած պետական աջակցությամբ իրականացվող մի շարք միջոցառումների՝ վերջին տասը տարիների ընթացքում Վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալներով հանրապետությունում զգալիորեն կրճատվել են հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 2011 թ. նկատմամբ 23,1%-ով: Ամենաբարձր մշակված ցանքատարածություն գրանցվել է 2016 թ.՝ 195,9 հազ. հա, որը 2020 թ-ին կրճատվել է շուրջ 38,8 %-ով: Նույն ժամանակաշրջանի համար և՛ աշնանացանի, և՛ գարնանացանի բերքատվության ցուցանիշները նույնպես նվազել են 21,0 %-ով և 26,7 %-ով՝ կազմելով ընդամենը աշնանացանի դեպքում 22,6 ց/հա, իսկ գարնանացանի դեպքում՝ 20,0 ց/հա: Ինչ վերաբերում է համախառն բերքին, ապա 2011-2016 թթ. ընթացքում այն կայուն աճել է՝ ի հաշիվ և՛ ցանքատարածքների աճի, և՛ բերքատվության մակարդակի բարձրացման, որից հետո, սակայն, կտրուկ նվազել է և 2020 թ. կազմել ընդամենը 242,0 հազ. տ՝ երբեմնի 435,5-598,9 հազ. տ-ի դիմաց: Արտադրված հացահատիկի շուրջ 50-60 %-ը կազմում է

աշնանացան և գարնանացան ցորենը (Գծապատկեր 1):

Չնայած արտադրատնտեսական հիմնական ցուցանիշների նվազմանը, 2020թ. հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածության տեսակարար կշիռը ընդհանուր ցանքերում կազմում է 53.8 %: Այսպիսի կառուցվածքը տնտեսական արդյունավետության տեսանկյունից հիմնավորված չէ և բարեփոխման կարիք ունի, քանի որ անգամ այս պարագայում ցորենի ինքնաբավության աստիճանը կազմում է ընդամենը 25,9 %: Բացի այդ, գյուղատնտեսական մյուս արտադրանքների համեմատ, հացահատիկային և հատիկարնդեղեն մշակաբույսերն ունեն ամենացածր ապրանքայնության մակարդակը՝ 30,8–31,0% (Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2020 թ.), որը հիմնականում ագրոտեխնիկական պահանջները չպահպանելու, ցածր բերքատվության, իրացման արդյունավետ և ժամանակակից ուղիների չկիրառման, ֆինանսական ռեսուրսների սղության արդյունք է:



Գծապատկեր 1. Հացահատիկային մշակաբույսերի հիմնական արտադրական ցուցանիշները ՀՀ-ում 2011–2020 թթ.<sup>1</sup>

## Հացահատիկի արժեչղթան

Առավել հանգամանորեն անդրադառնանք հացահատիկի արտադրությունից մինչև իրացում ծագող փոխհարաբերություններին, որն իրենից ներկայացնում է բարդ, մարտահրավերներով ու ռիսկերով արժեչղթա և որի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է ուսումնասիրել շղթայի հիմնական դերակատարների գործունեությունը, վեր հանել յուրաքանչյուր փուլում ծագող խոչընդոտները և առաջարկել դրանց լուծմանն ուղղված միջոցառումներ:

Արժեչղթայի հիմնական դերակատարներն են՝

- 1-ին օղակում՝ սերմարտադրողները և/կամ սերմ ներմուծողները, պարարտանյութ, թունաքիմիկատ և այլ նյութատեխնիկական միջոցներ մատակարարողները (հումքի, արտադրության միջոցների մատակարարողները):

<sup>1</sup> Գծապատկերը կազմվել է Վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալների հիման վրա

- րարները),
- 2-րդ օղակում՝ գյուղատնտեսությունում տնտեսավարողները (ֆիզիկական և իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատեր),
- 3-րդ օղակում՝ վերամշակող ընկերությունները (ալրադացներ, հացաթխման արտադրամասեր, հրուշակեղենի, մակարոնեղենի, կերերի արտադրությամբ զբաղվող ընկերություններ և այլ), վաճառողներն ու սպառողները:

Արժեշրթայի արդյունավետության վրա ազդող հիմնական գործոնները հետևյալներն են՝ արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ միջոցներ՝ սերմ, պարարտանյութ, թունաքիմիկատներ, տեխնիկա, հողային և ջրային ռեսուրսներ, հետերքահավաքային ենթակառուցվածքներ, որակյալ կադրեր, ֆինանսական ռեսուրսներ, իրացման կառուցակարգեր, մեծածախ և մանրածախ շուկաներ և այլն:

Արժեշրթայում ձևավորված իրավիճակի վերլուծության նպատակով իրականացրել ենք ՈՒԹՀՍ վերլուծություն, ըստ որի ակնհայտորեն գերակայում են տարբեր գործոններով պայմանավորված թույլ կողմերը, ինչպես արտադրական, այնպես էլ հումքի վերամշակման և նրան հաջորդող փուլերում: Միաժամանակ առկա են արժեշրթայի կատարելագործման և լուծում պահանջող հնարավորությունները (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1.


ՀՀ-ում ցորենի արժեշրթայի ՈՒԹՀՍ վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<ul style="list-style-type: none"> <li>➢ Լեռնային և նախալեռնային շրջանների ավանդույթներ</li> <li>➢ Հարուստ և բազմազան բնական ռեսուրսներ</li> <li>➢ Ցորենի շատ տեսակների հարենիք (բնակլիմայական պայմաններին բարձր հարմարվողականություն)</li> <li>➢ Մշակության ավանդույթներ</li> <li>➢ Միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող տնտեսական նախաձեռնություններ</li> <li>➢ Վարկային միջոցների հասանելիություն</li> <li>➢ Բնակլիմայական նպաստավոր պայմաններ զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացման համար</li> <li>➢ Գյուղատնտեսական նշանակության հողային ռեսուրսների, օրգանական գյուղատնտեսություն վարելու պայմանների առկայություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➢ Չօգտագործվող վարելահողերի, այդ թվում՝ կոնֆլիկտային իրավիճակով պայմանավորված սահմանամերձ և ակնապատված հողերի առկայություն, Ենթակառուցվածքների թերզարգացվածություն</li> <li>➢ Գյուղատնտեսական նշանակության հողերի մասնատվածություն, ոչ լիարժեք օգտագործում</li> <li>➢ Գյուղատնտեսական տեխնիկայի պակաս և մաշվածություն</li> <li>➢ Գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարողների մասնագիտական կարողությունների և տեղեկացվածության ցածր մակարդակ</li> <li>➢ Նոր տեխնոլոգիաների ներդրման ցածր մակարդակ</li> <li>➢ Ոռոգման սահմանափակ հնարավորություններ</li> <li>➢ Հետերքահավաքային ենթակառուցվածքների սահմանափակ առկայություն,</li> <li>➢ Արտագաղթ</li> <li>➢ Կոռուպցիայի ցածր մակարդակ</li> <li>➢ Բնական աղետներ</li> <li>➢ Կլիմայի փոփոխության հարմարվողականության միջոցառումների վերաբերյալ տեղեկացվածության ցածր մակարդակ</li> <li>➢ Մթերման ծավալների ցածր մակարդակ</li> <li>➢ Եկամտաբերության ցածր մակարդակ</li> <li>➢ Պայմանագրային հարաբերությունների բացակայություն</li> </ul>

Աշոտ Ոսկանյան, Աննա Քարտաշյան

Հնարավորություններ	Սպառնալիքներ
<ul style="list-style-type: none"> <li>➤ Չօգտագործվող վարելահողերի առկայություն</li> <li>➤ Անջրդի պայմաններում մշակության կազմակերպում</li> <li>➤ Միջազգային դոնոր կազմակերպությունների օժանդակությամբ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի իրականացումն ուր տեխնոլոգիաների ներդրմամբ</li> <li>➤ Ազրոտուրիզմի զարգացման հնարավորություն</li> <li>➤ Պետական աջակցությամբ մատչելի ֆինանսական միջոցների հասանելիություն</li> <li>➤ Հացահատիկային և հատիկաբնույթի մշակաբույսերի ապահովագրության հասանելիություն</li> <li>➤ Արժեշխանների կատարելագործում</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>➤ Անորակ սերմերի օգտագործում</li> <li>➤ Ներմուծված ցորենի բարձր որակն ու մատչելիությունը տեղականի նկատմամբ</li> <li>➤ Արտադրված ցորենի ապրանքայնության ցածր մակարդակ</li> <li>➤ Արժեշխանություն փոխհարաբերությունների խզվածություն</li> <li>➤ Երիտասարդ աշխատուժի նվազում</li> <li>➤ Հիվանդություններ և համավարակներ</li> <li>➤ Կլիմայի փոփոխություն և բնական աղետների հաճախացում</li> </ul>

Հացահատիկի արժեշխան ներկայացված է գծապատկեր 3-ում և պայմանականորեն տարբերակված է 3 մակարդակով.



Գծապատկեր 3. Հացահատիկի արժեշխան ՀՀ-ում

**1-ին մակարդակ՝ արտադրության կազմակերպման համար անհրաժեշտ միջոցների ներդրում:** Արդյունավետ արտադրության համար

գլխավոր նախապայմանը բարձրորակ միջոցների առկայությունն ու ճիշտ օգտագործումն է: Արժեչղթայի առաջնային օղակում արդյունավետ արտադրության կազմակերպման, բերքատվության մակարդակի բարձրացման և բերքի ծավալների ավելացման նախապայման է բարձրորակ սերմերի, պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործումը, որակյալ մասնագետների առկայությունը:

Պետք է ընդգծել, որ ներկայումս հացահատիկային տնտեսությունում ներգրավված սուբյեկտները հաճախ օգտագործում են անհայտ ծագման, չստուգված և ցանքի համար ոչ բավարար պիտանիություն ունեցող սերմեր: Հայաստանում դեռևս չի հաջողվել ապահովել որակյալ սերմերի անհրաժեշտ ծավալների արտադրություն և ձևավորել սերմնաբուծության համապատասխան համակարգ (մարզպետարաններից ստացված տեղեկատվության համաձայն 2020թ. համար պահանջարկ է ներկայացվել նվազագույնը 8000 տոննա աշնանացան ցորենի որակյալ սերմի, իսկ սերմարտադրողների տվյալների համաձայն արտադրվելու էր շուրջ 3300 տոննա): Միաժամանակ սորտաթարմացման և սորտափոխանակման աշխատանքները կատարվում են տարերայնորեն:

Հայաստանի Հանրապետությունում հացահատիկային և հատիկաընդեղեն մշակաբույսերի սելեկցիայի և առաջնային սերմնաբուծության ոլորտում մասնագիտացված հիմնական դերակատարներն են «Գյումրիի սելեկցիոն կայան» և «Երկրագործության գիտական կենտրոն» ՓԲԸ-ները, ինչպես նաև՝ «Արմենիան ԹեքստիլընդիԳրուփ» հիմնադրամը և «Սերմ արտադրողների միություն» ՍՊԸ-ն, որոնք, սակայն, ի վիճակի չեն բավարարել հանրապետությունում հացահատիկային մշակաբույսերի սերմերի առկա պահանջարկը:

Երկրորդային սերմնաբուծությամբ զբաղվում են նաև մասնավոր տնտեսություններ, որոնք հիմնականում հիմնային սերմերը ներմուծում են Ռուսաստանի Դաշնությունից՝ արտադրելով 1-ին վերարտադրության սերմեր: Սերմարտադրողների հետ քննարկումների արդյունքում պարզ դարձավ, որ ինչպես գիտական կենտրոնները, այնպես էլ մասնավոր տնտեսություններն արտադրված սերմերի իրացման խնդիրներ են ունենում, այն դեպքում, երբ վերջիններիս արտադրության ծավալները բավարար չեն և հեռու են հանրապետության պահանջարկը բավարարելուց: Այսինքն՝ բացակայում է սերմնաբուծության արդյունավետ կառավարման համակարգը, թույլ են տնտեսական, տեխնիկական և կազմակերպական լուծումները: Հիմնականում գյուղատնտեսությունում տնտեսավարողները նախընտրում են օգտագործել իրենց ունեցած ցածրորակ (անհայտ ծագման) 2-րդ, 3-րդ վերարտադրության սերմերը, քան 160–220 դրամով գնել որակյալ բարձր վերարտադրության սերմ կամ տեղական արտադրության նկատմամբ անվստահության պատճառով նախընտրում են ներմուծել հիմնականում Ռուսաստանի Դաշնությունից՝ գտնելով, որ ներմուծված սերմերը առավել որակյալ են, քան տեղական արտադրության սերմերը:

Բացի որակյալ սերմերի օգտագործումից, արտադրության ծավալների ավելացման համար կարևոր է նաև որակյալ պարարտանյութերի, բույսերի

պաշտպանության միջոցների, ինչպես նաև գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիությունն ու ճիշտ կիրառումը: Քննարկումները վկայում են, որ շատ հաճախ ոչ միայն որակյալ սերմերի ձեռքբերումն է խնդիր, այլ նաև պարարտանյութի և վառելիքի անբավարար քանակը, ձեռքբերման դժվարությունները: Պակաս կարևոր չէ նաև տնտեսավարողների կողմից առկա արտադրության միջոցների ճիշտ կիրառումը՝ ագրոտեխնիկական պահանջների պահպանումը, որը հիմնականում պայմանավորված է տնտեսավարողների մասնագիտական կարողություններով և տեղեկացվածության մակարդակով:

Այսպիսով, արժեշղթայի առաջնային օղակում առկա մարտահրավերներն են՝

- բարձր վերարտադրության սերմերի արտադրությունն ու ձեռքբերումը,
- որակյալ պարարտանյութերի և բուժանյութերի հասանելիությունը,
- գյուղատնտեսական տեխնիկայի հասանելիությունը և նոր տեխնիկայի կիրառումը,
- որակյալ մասնագետների պակասը:

**2-րդ մակարդակ՝ մշակության կազմակերպում:** Արժեշղթայի հաջորդ օղակն արտադրության իրականացման փուլն է, որն իր մեջ ներառում է հողի նախապատրաստական աշխատանքներից մինչև ցանք, մշակություն, բերքահավաք, պահեստավորում: Եթե արտադրության միջոցների որակը և հասանելիությունը խիստ կարևոր են արտադրության արդյունավետ կազմակերպման համար, ապա տնտեսավարողների տնտեսության վարման և մշակության փորձն ու մեթոդները նույնպես պակաս կարևոր չեն:

Այս փուլում նույնպես տնտեսավարողները բախվում են մի շարք խնդիրների, մասնավորապես՝ հողերի մասնատվածությունը, տնտեսությունների փոքր չափերին, գյուղատնտեսական տեխնիկայի մաշվածությանը կամ բացակայությանը, մասնագիտական ոչ բավարար կարողությունների և այլն:

Հանրապետությունում հացահատիկի մշակությամբ զբաղվում են շուրջ 105612 տնտեսություն, որոնցից 33100-ը հացահատիկ է մշակում մինչև 0,5 հա ցանքատարածությունների վրա, 68806-ը՝ 0,5-5,0 հա-ի վրա, իսկ 3706-ը՝ 5 հա-ից ավել տարածությունների վրա: Այսինքն՝ հացահատիկի մշակությամբ զբաղվող տնտեսությունների ընդամենը 65,1 %-ը մշակությունը կազմակերպում է 0,5-5,0 հա-ի վրա, որի 40 %-ը 0,5-1,0 հա-ի վրա (Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները):

Տնտեսավարողների կողմից տնօրինվող հողատեսքերի փոքր չափերը հնարավորություն չեն տալիս կազմակերպել արդյունավետ արտադրություն: Միաժամանակ, մշակության ընթացքում ագրոտեխնիկական պահանջների խախտումը հանգեցնում է բերքատվության մակարդակի նվազմանն ու կորուստների ավելացմանը: Գյուղատնտեսական տեխնիկայի պակասի և որոշ խիստ կարևոր արտադրության միջոցների ոչ ժամանակին մատակարարման պատճառով շատ տնտեսավարողներ չեն կարողանում պատշաճ ձևով իրա-



կանացնել հողի մշակությունը, որը հանգեցնում է արտադրական կորուստների: Բացի այդ, ոչ բոլոր տնտեսավարողներն են կիրառում ցանքաշրջանառություն, որը բերքատվության բարձրացման գլխավոր նախապայմաններից մեկն է: Տնտեսավարողների մոտ կորուստներ լինում են նձ ցանքի, նձ բերքահավաքի ընթացքում (հիմնականում պատճառաբանում են տեխնիկայի բացակայությունը և հին տեխնիկայով բերքահավաքի կազմակերպումը): Ստեղծված իրավիճակում տնտեսավարողները պատշաճ չեն պահպանում ցորենի մշակության ագրոտեխնիկական պահանջները: Այնուամենայնիվ, ցորենի բերքի ամենաշատ կորուստները պայմանավորված են բնակլիմայական աղետներով՝ երաշտ, կարկուտ, որոնց դեպքում ունենում են բերքի շուրջ 60-80 % կորուստ: Այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը իրականացրել է որոշակի քայլեր, մասնավորապես՝ գյուղատնտեսության ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի արդյունքում 2020թ. ապահովագրվել է 1330 հա հացահատիկի ցանքատարածություն: Այս փուլում կարևորվում է նաև հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի միջոցառումների ձիշտ և ժամանակին կիրառումը, որի համար անհրաժեշտ է համատեղ պայքարի իրականացման համակարգում և մոնիթորինգի արդյունավետ իրականացում:

Ցորենի արժեշտի երկրորդ օղակում առկա մարտահրավերներն են՝

- տնտեսությունների փոքր չափերը,
- առկա գյուղատնտեսական տեխնիկայի անբավարար քանակն ու մշակածությունը, որը հանգեցնում է վառելանյութի և քսայուղերի գերծախսի, բերքի գերնորմատիվային կորուստների, նորոգման և սպասարկման ծախսերի՝ արդյունքում ինքնարժեքի բարձրացման,
- ֆինանսական միջոցների սղության պատճառով արտադրության միջոցների ոչ ձիշտ չափաքանակներով և սխալ ժամկետներում օգտագործումը,
- տնտեսավարողների մասնագիտական ցածր կարողությունները և այլն:

**3-րդ մակարդակ՝ իրացման կազմակերպում և վերամշակում:** Արժեշտի հաջորդ օղակն իր մեջ ներառում է արտադրված ցորենի գնման, տեղափոխման, պահեստավորման և արտադրությունում վերամշակման փուլը: Վերամշակող ընկերությունները հումքը մշակում և վերածում են կիսավերջնական կամ վերջնական արտադրանքների, որից հետո վերամշակված արտադրանքը տարբեր ուղիներով հասնում է վերջնական ապառողներին:

Այս օղակում վերամշակող ընկերությունների ամենակարևոր խմբերից մեկը ալրադաշններն են, որոնք ցորենից ալյուր են ստանում: Այնուհետև ալյուրից արտադրում են տարբեր տեսակի հացամթերքներ՝ հաց, հրուշակեղեն և այլն: Ուստի արդյունավետ արտադրություն կազմակերպելու համար ոչ պակաս կարևոր է ցորենի մշակությամբ և վերամշակմամբ զբաղվող տնտեսությունների փոխհարաբերությունները: Այս փուլում կարիք է զգացվում ալրադաշնների և հացաթխման արտադրամասերի կողմից ներկայացվող պահանջների և որակի վերահսկողության ցանկալի միջոցառումների հստակեցման:

Արտադրված ալյուրի նկատմամբ հացաթխման արտադրամասերը ուշադրություն են դարձնում ալյուրի տեսակի և որակի վրա, որն օգտագործվում է հացի տարբեր արտադրատեսակներ թխելու համար:

Հացաթխման ոլորտի ձեռնարկությունները ալրադաշային արտադրության հիմնական պատվիրատուներն են: Հացի արտադրության համար գլխավոր նախապայմանը ցորենում չոր տոսնձանյութի պարունակությունն է, որը չպետք է ցածր լինի 18-19 %-ից, հակառակ դեպքում այն չի կարող օգտագործվել հացի արտադրության համար (Հայաստանում ցորենի, գարու և հաճարի... 2012, 76 էջ): Որպես կանոն ալյուրը ներմուծվում է ՌԴ-ից, և ինչպես նշում են տնտեսավարողները առավել որակյալ և ավելի մատչելի է, քան տեղական արտադրությանը: Հաճախ ալյուրի որակը բարձրացնելու համար ռուսական ցորենը խառնվում է տեղականին: Գործնականում ալյուրի որակը չի ստուգվում գնման գործընթացում, այլ փորձարկվում է թխման ընթացքում:

Այսպիսով, ցորենի արժեզրթայի երրորդ օղակում գլխավոր մարտահրավերը ցորենի մշակությամբ զբաղվող տնտեսավարողների և վերամշակողների միջև փոխհարաբերությունների բացակայությունն է: Ըստ էության վերամշակող ընկերությունները խուսափում են տեղական արտադրության ցորենի գնման պատվերներ իջեցնելուց՝ պատճառաբանելով որակական ցածր հատկանիշները:

Արժեզրթայի բոլոր օղակներում էլ արդյունավետ գործունեություն ծավալելու համար բացի ռեսուրսների, շրջանառու միջոցների պակասից, պայմանագրային հարաբերությունների անկատարությունից և այլն, պակաս նշանակություն չունի նաև արժեզրթայի երկայնքով կորուստների և թափոնների նվազեցումն ու վերաօգտագործումը:

Կորուստները և թափոնները հիմնականում առաջանում են արժեզրթայի անարդյունավետությունից, որոնք իրենց բացասական ազդեցությունն են թողնում պարենային անվտանգության վրա: Կորուստներն ու թափոնները հանգեցնում են առաջարկի նվազման, տնտեսավարողների եկամուտների կրճատման, ինչպես նաև գնաձի, որն էլ իր բացասական ազդեցությունն է ունենում սպառողների վրա:

Հիմնական թափոններն են՝ հացահատիկային փոշին, հացահատիկի մեխանիկական մաքրումից առաջացած թափոնները, հացահատիկային կճեպը, ցորենի ալյուրի տեխնոլոգիական կորուստները, թեփի և մաղուցքի թափոններ, խմորի թափոնները և այլն (Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը... էջ 1,2):

Ցորենի արժեզրթայի թափոնները հիմնականում առաջանում են ալրադաշային, համակցված կերերի, հացաբուլկեղենի արդյունաբերությունում: Ցորենի հատիկը, աղացման թափոնները արժեքավոր կեր են և հումք համակցված կերերի համար: Որպես անասնակեր օգտագործվում է նաև ցորենի ծղոտը, մասնավորապես՝ գարնանացան ցորենի, որն ավելի սննդարար և դյուրամարս է: Ծղոտի մի մասը մնում է դաշտում, ծածկվում հողով կամ

այրվում: Ծրույն օգտագործում են նաև այգիներում ու հատապտղանոցներում՝ որպես պաշտպանիչ միջոց մոլախոտերի դեմ: Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ ծրույնը կարելի է օգտագործել նաև որպես բրիկետային կենսավառելիքի ստացման հումք: Բրիկետավորված կենսավառելիքը գնալով ավելի մեծ տարածում է գտնում, քանի որ ստացվում է կենսաբանական հումքից, որը այլ ոլորտներում օգտագործման համար գրեթե պիտանի չէ, ինչպես նաև այրումից առաջացած մոխիրը կարելի է օգտագործել որպես հանքային պարարտանյութ (Ավետիսյան, 2018):

Կորուստների և թափոնների դեմ պայքարը պահանջում է արժեշղթայի բոլոր դերակատարների միջև լայն համագործակցություն՝ խնդիրն արդյունավետ կերպով բարձրացնելու, գնահատելու և լուծման արդյունավետ տարբերակներ գտնելու համար:

### Եզրակացություն

Արժեշղթայի շուրջ մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ըստ առանձին փուլերում շահութաբերության մակարդակը խիստ տարբերակված են, եթե ցորենի արտադրության մեկ միավորի հաշվով կազմում է 40,0 %, ապա այլուրի՝ 24,9 %, իսկ հացին՝ 48,2 %: Արժեշղթայի բոլոր օղակների գործունեության տնտեսական արդյունավետության բարձրացման չօգտագործված հնարավորություններ կան: Հանրապետությունում հացահատիկի արտադրության և իրացման հիմնախնդիրների կարգավորման համար անհրաժեշտ է համալիր և փոխկապակցված մոտեցում ցուցաբերել և պետական քաղաքականությունն ուղղել հացահատիկի արտադրության արդյունավետության և ապրանքայնության մակարդակի բարձրացմանը՝ կողմնորոշում ունենալով ցորենի պահանջարկի 55-60%-ը կայուն կերպով ապահովվելու տեղական արտադրությամբ: Ընդ որում՝

- ՀՀ կառավարությունն արդեն իսկ ձեռնարկել է որոշ քայլեր՝ խթանել տեղական ցորենի արտադրության ծավալների ավելացումը՝ 1 կգ աշնանացան ցորենի սերմի գնի սուբսիդավորմամբ: Պետական աջակցության շրջանակում վաճառվել է շուրջ 4200 տ աշնանացան ցորենի սերմ, սակայն 2020 թ. 2019թ. նկատմամբ աշնանացան ցորենի ցանքային տարածությունները նվազել են 529 հա-ով (Վիճակագրական տեղեկագիր, 2019, 2020, էջ 18), մինչդեռ վաճառված սերմով հնարավոր է կատարել շուրջ 14,0 հազ. հա ցանք: Հանրապետությունում սերմնաբուծության զարգացման և հացահատիկի բերքատվության մակարդակի բարձրացման համար առաջարկում ենք ծախսերի մասնակի փոխհատուցմամբ ներդնել սերմնաբուծության աստիճանական զարգացման համակարգ, որտեղ սերմնաբուծությամբ և սերմարտադրությամբ կգբաղվեն գիտական կենտրոնները՝ արտադրելով սուպերէլիտային և էլիտային սերմեր, և մասնագիտացված գյուղացիական տնտեսությունները՝ արտադրելով էլիտային և 1-ին վերարտադրության սերմեր, այսինքն՝ կատեղծվի սերմարտադրության ընդհանուր շարունակական շղթա և կբարձրանա սելեկցիայի և սորտա-

թարմացման աշխատանքների արդյունավետությունը: Կամ էլ, ինչպես արվում է Հնդկաստանի Հանրապետությունում բրնձի սերմերի համար, սկզբնական փուլում կարելի է խթանել միայն սուպերէլիտա սերմերի արտադրությունը, մասնավորապես յուրաքանչյուր արտադրված 10 կգ-ի համար սուբսիդիայի տրամադրում,

- հացահատիկացան տնտեսությունների փոքր չափերով պայմանավորված խնդիրների լուծման նպատակով ժամանակն է արագացնել հողերի խոշորացմանն ուղղված միջոցառումները, կիրառել կառավարման մարմիններ-տնտեսավարող սուբյեկտներ համագործակցության առաջավոր ձևեր /կոոպերացիա, կլաստերային մոտեցումներ և այլն/,
- արժեշոթայի արդյունավետ գործունեության համար կարևոր նախապայմաններից մեկն էլ ցորենի մշակությամբ զբաղվող տնտեսավարողների և վերամշակողների միջև պայմանագրային հարաբերությունների(երկարատև ժամանակահատվածի համար) հաստատումն է, որը կնպաստի վերամշակողների պահանջներին համապատասխան արտադրության կազմակերպմանը: Առաջարկում ենք օժանդակել վերամշակողների պահանջարկին համապատասխան որակի ցորենի արտադրությունը, մասնավորապես՝ խթանել արտադրող և վերամշակող կոոպերատիվների ստեղծմանը,
- հացահատիկի արտադրության ծավալների ավելացման միջոցառումներում հատկապես կարևորվում է իրականացնել քայլեր եկամտաբերության բարձրացմանն ուղղությամբ, մասնավորապես կատարված ծախսերի փոխհատուցմամբ, իրացման և գնման ձևեր կառուցակարգերի, ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ, կառավարության կողմից վերամշակող ընկերություններին մթերման գնի մի մասի սուբսիդավորմամբ և այլն:

## Օգտագործված գրականության ցանկ

*Հայաստանի Հանրապետության փարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին* ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26 N 342-Ն հրաման

*Հայաստանում ցորենի, գարու և հաճարի արժեքային շղթաների գնահատում* (2012) Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն: Պատրաստված և նախատեսված է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության համար, Երևան, 76 էջ:

*Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համապարած հաշվառման հիմնական արդյունքները*, (2016) Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն.-Եր.: Տիգրան Մեծ,-416 էջ:

Ավետիսյան, Ս. *Գյուղատնտեսական արտադրության թափոններից կենսավառելիքի արտադրության բիոէներգետիկ ներուժը Հայաստանի Հանրապետությունում* ([asue.am/amberd/publications/analysis/agricultural-production-waste-republic-armenia](http://asue.am/amberd/publications/analysis/agricultural-production-waste-republic-armenia) )

- Գյուղատնտեսական արտադրանքի իրացումը (օգտագործումը) անհատական (գյուղացիական) տնային տնտեսությունների կողմից 2020 թվականին: (2021) Վիճակագրական տեղեկագիր: Երևան: (<https://armstat.am/am/?nid=82&id=2374>)
- Վիճակագրական տեղեկագիր, (2020) Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2019 թվականին: Երևան: (<https://armstat.am/am/?nid=82&id=2368>)
- Վիճակագրական տեղեկագիր, (2021) Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքային տարածությունները, բազմամյա տնկարկների տարածությունները, համախառն բերքը և միջին բերքատվությունը 2020 թվականին: Երևան: (<https://armstat.am/am/?nid=82&id=2244>)
- Պարենային ապահովություն և աղքատություն, 2018թ. հունվար-դեկտեմբեր: Պարենի առկայություն: (<https://armstat.am/am/?nid=82&id=2125>)
- Պարենային ապահովություն և աղքատություն, 2019թ. հունվար-դեկտեմբեր: Պարենի առկայություն: (<https://armstat.am/am/?nid=82&id=2238>)
- Պարենային ապահովություն և աղքատություն, 2020թ. հունվար-դեկտեմբեր: Պարենի առկայություն: (<https://armstat.am/am/?nid=82&id=2238>)

## References

- Hayastani Hanrapetutyuan taracqum goyacox artadrutyuan (ayd tvum' ynderqogtagorcman) ev sparman taponneri canky hastatelu masin HH bnapahpanutyuan naxarari 2006 tvakani 26 N 342-N hrman [Order of the RA Minister of Nature Protection “On Approval of the List of Production Wastes (Including Subsoil Use) and Consumption Wastes on the Territory of the Republic of Armenia”] (In Arm.)
- Hayastanum coreni, garu ev hachari arjeqayin shxtaneri gnahatum (2012) [Wheat, barley and spelt value chains assessment in Armenia], Agrobiznesi hetazotutyunneri ev krtutyuan mijazgayin kentron, Patrastvac ev naxatesvac e germaniayi mijazgayin hamagorcakcutyan yunkerutyuan hamar, Erevan. (In Arm.)
- Hayastani Hanrapetutyuan 2014 tvakani gyuxatntesakan hamatarac hashvarman himnakan ardyunqneri (2016) [Main results of agricultural census of 2014 in the Republic of Armenia]. Hayastani Hanrapetutyuan azgayin vichakagrakan carayutyun, Er., Tigran Mec, 416ej. (In Arm.)
- Avetisyan, S. Gyuxatntesakan artadrutyuan taponneric kensavareliqi artadrutyuan bioenergetik nerujy Hayastani Hanrapetutyunum [Bioenergy potential of biofuel production from agricultural waste in the Republic of Armenia] ([asue.am/amberd/publications/analysis/agricultural-production-waste-republic-armenia](https://asue.am/amberd/publications/analysis/agricultural-production-waste-republic-armenia)). (In Arm.)
- Vichakagrakan texekagir (2021). Gyuxatntesakan artadranqi iracumy (ogtagorcumy) anhatakan (gyuxacikan) tnayin tntesutyunneri koxmic 2020 tvakanin, [Agricultural Products Marketing (utilization) by Individual (rural) Households in 2020]. Erevan. (<https://armstat.am/am/?nid=82&id=2374>). (In Arm.)
- Vichakagrakan texekagir (2020). Gyuxatntesakan mshakabuyseri canqayin taracutyunnery, bazmamya tnkarkneri taracutyunnery, hamaxarn berqy ev mijin berqatvutyuny 2019 tvakanin [Sown areas of agricultural crops, planting area of permanent crops,

- gross harvest and average crop capacity for 2019], Erevan. (<https://armstat.am/am/?nid=82&id=2368>) (In Arm.)
- Vichakagrakan texekagir (2021). *Gyuxatntesakan mshakabuyseri canqayin taracutyunnery, bazmamya tnkarkneri taracutyunnery, hamaxarn berqy ev mijin berqatvutyuny 2020 tvakanin* [Sown areas of agricultural crops, planting area of permanent crops, gross harvest and average crop capacity for 2020]. Erevan. (<https://armstat.am/am/?nid=82&id=2244>) (In Arm.)
- Parentayin apahovutyun ev axqatutyun* [Food security and poverty], 2018 t. hunvar-dektember. Parenti arkayutyun. (<https://armstat.am/am/?nid=82&id=2125>) (In Arm.)
- Parentayin apahovutyun ev axqatutyun* [Food security and poverty], 2019 t. hunvar-dektember. Parenti arkayutyun. (<https://armstat.am/am/?nid=82&id=2238>) (In Arm.)
- Parentayin apahovutyun ev axqatutyun* (Food security and poverty), 2020 t. hunvar-dektember. Parenti arkayutyun. (<https://armstat.am/am/?nid=82&id=2238>) (In Arm.)

**Ашот Восканян**

*И.о. заведующего кафедрой управления и политики агробизнеса  
Национального аграрного университета Армении,  
директор центра аграрной политики и экономических исследований,  
кандидат экономических наук, доцент  
Эл. адрес: ashot.voskan@gmail.com*

**Анна Карташян**

*Ассистент кафедры управления и политики агробизнеса Национального  
аграрного университета Армении, главный специалист Департамента  
разработки сельскохозяйственных программ, использования ресурсов и  
развития кооперации Министерства экономики РА  
Эл. адрес: qartashyananna@gmail.com*

## **О ПРОБЛЕМАХ ПРОИЗВОДСТВА И РЕАЛИЗАЦИИ ЗЕРНА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

В условиях пандемии коронавируса, а также в чрезвычайных ситуациях, обеспечение стабильности и устойчивости производства зерна становится все более важным.

Цель статьи – выявить проблемы цепочки “производство – реализация” зерна и предложить пути их решения.

Используя методы экономического исследования, а также встречи–обсуждения–опросы, был проведен анализ взаимосвязи производства зерна и его реализации, выявлены сильные и слабые стороны цепочки стоимости пшеницы, проведен SWOT– анализ возможностей и угроз. В результате предложены комплексные мероприятия по урегулированию проблем производства и реализации зерна в Республике.

**Ключевые слова:** производственно–сбытовая цепочка, производство,

переработка, продажа, семеноводство, консолидация земель, продуктивность, государственная поддержка.

***Ashot Voskanyan***

*Acting Head of Agribusiness Management and Policy Chair, National Agrarian University of Armenia, Director of Agrarian Policy and Economics Research Center, Ph.D. in Economics, Associate Professor  
Email: ashot.voskan@gmail.com*

***Anna Kartashyan***

*Assistant of Agribusiness Management and Policy Chair, National Agrarian University of Armenia, Senior Specialist of Agricultural Programs Elaboration, Resource Use and Cooperatives Development Department of the Ministry of Economy  
kartashyananna@gmail.com*

**GRAIN PRODUCTION AND SALE PROBLEMS  
IN THE REPUBLIC OF ARMENIA**

Long-term and sustainable ensuring of grain production is of high importance especially in the context of the coronavirus epidemic, as well as in emergency situations.

The main objective of the article is to reveal the problems of the chain of the production to its final consumption and to propose problem solutions.

Using the methods of economic research, meeting-discussion-inquiries, an analysis of relationships during the whole cycle of grain production to sale, as well as SWOT analysis of wheat value-chain has been implemented. As a result, comprehensive measures have been proposed to regulate grain production and sale problem in the country.

**Key words:** value chain, production, processing, sale, seed breeding, land consolidation, marketability, state support.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2021թ. մարտի 17-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2021թ. ապրիլի 17-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2021թ. ապրիլի 24-ին: